# ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
# НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

## ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԳՈՐԻՍՈՒՄ

Գորիսի շրջանը հարուստ է մարդկության զարգացման տարբեր փուլերին պատկանող հուշարձաններով։ Սակայն հնագիտական տեսակետից անբավարար ուսումնասիրված լինելու պատճառով որոշ օղակներ դեռևս մութ են մնում, հանգամանք, որը խոչընդոտում է մշակույթի հաջորդական զարգացման պատկերի վերհանմանը։ Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում Գորիսի Նորահայտ քարանձավից գտնված նյութերը։ Պեղումների ընթացքում պարզվեց, որ դրանք քարանձավ են դրվել, երբ ավելի վաղ կացարան հանդիսացած այդ շինությունը, լքվելով բնակիչների կողմից, հետագայում դամբարանի է վերածվել[1]։ Իրոք, քարանձավում սփռված այդ նյութերը հայտնաբերվեցին դեպի մուտքը թեթևակի ցածրացող խորդուբորդ հատակին 22—35 սմ հաստությամբ ավազի շերտի վրա և այն ծածկող խճի, հողի լիցքում։ Լիցքը հեռացնելուց հետո ի հայտ եկան հետաքրքիր կառուցողական մանրամասներ, որոնք լույս են սփռում մեր նախնիների կենցաղի որոշ կողմերի վրա։ 7,9 մ երկարությամբ և 5,5 մ լայնությամբ, հյուսիս-արևմուտքից հարավ-արևմուտք ուղղված, պարկաձև հատակագիծ ունեցող այս քարանձավի հատակի փափուկ տուֆաղանգվածում փորված էր չորս հոր (նկ. 1)[2]։ Դրանցից երկուսը, որ գտնվում էին հյուսիս-արևմտյան հատվածում, միջանցիկ անցքով իրար էին միացված (խորությունները 85 և 110 սմ, տրամագծերը 80—90 և 45—50 սմ)։ Այդ հորերից մեկը (II) հյուսիսային մասում կոշիկի ձևով խորանում էր հատակի տակ։ Երկու այլ հորեր փորված էին քարայրի հարավային մասում. մեկն անմիջապես պատի տակ, մյուսը՝ դեպի կենտրոն (տրամագծերը՝ 45—66 սմ և 80—85 սմ, խորությունները՝ 100 և 130 սմ)։ Բոլոր հորերը, բացառությամբ IV-ի ծածկված էին սալերով, որոնք լրացուցիչ շրջափակված էին փոքր քարերով։ Վերջիններս, խցանելով ազատ մնացած տարածությունները, մաքուր էին պահել հորերը։ Հավանաբար դրանք տնտեսական նշանակություն են ունեցել։ Հատակին փորված էին նաև տարբեր չափերի (խորությունները 10—28 սմ) և ձևերի (շրջանաձև, ձվաձև, ուղղանկյունաձև) փոսորակներ, որոնցում անձրևների և ձնհալի ընթացքում հավաքված ջուրը հեռացվել է թասիկներով։ Դասավորված լինելով մուտքի առջևում, այդ փոսորակները հուշում են, որ դուռ կոչվածը թերևս ամուր չի ծածկել մուտքի ստորին մասում եղած անցքերը։

Հատուկ պատրաստված օջախ քարանձավում չհայտնաբերվեց, սակայն հարավային պատի գրեթե կենտրոնում առկա ոչ խոր խորշի պատերին, հատակին և առաստաղին պարզ երևում էին մրի հետքեր։

Ներկայացնելով քարայր-կացարանի ներքին հարդարանքը, նշենք, որ նրա հյուսիսային և հյուսիս-արևմտյան պատերի տակ, տուֆի ղանգվածը փորելով, բնակիչները պատրաստել էին «նստարան-մահճեներ», որոնք հատակից

---

1 Ամբողջությամբ ծածկված լինելով հողի հղոր շերտով՝ քարանձավը պատահականորեն բացվել էր ճանապարհաշինարարության ընթացքում։ Նախքան պեղումների սկսվելը հուշարձանը տարբեր մասերում, առանձին անձանց կողմից որոշ չափով խաթարվել էր։ Հատակապես վնասված էր նրա հյուսիս-արևմտյան հատվածը, որտեղից հայտնաբերված նյութերը հավաքել էր տեղի բնակիչ Վարդան Սարգսյանը։ Նրա դրած նամակն էլ պեղումներ սկսելու պատճառ դարձավ։ Ավելին, Վ. Վ. Սարգսյանը, հետագայում մեզ հանձնելով այդ նյութերը, արժեքավոր տեղեկություններ հաղորդեց դրանց հայտնաբերման հանգամանքների վերաբերյալ, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

2 Չափագրությունների վերաբերյալ շահեկան խորհուրդների, ինչպես և գծագիրը կատարելու համար շնորհակալություն ենք հայտնում Կ. Կ. Ղաֆադարյանին։

26—53 սմ բարձր, ոչ լայն (65—83 սմ), երկարուկ (2,3—2,5 մ) տեսք ունեցող պատվանդաններ են։ Ավարտելով հուշարձանի նկարագրությունը, նշենք, որ հորերում և ընդհանրապես ավազի տակ ընկած շերտում ոչ մի նյութ չհայտնաբերվեց, որը և թույլ չի տալիս որոշել




Նկ. 1 ՔԱՐԱՑՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԸ ԵՎ ԿՏՐՎԱԾՔԸ

Ա.Բ.Գ.-դիակիզման հետքեր, ⊗ -հորեր, ⊕ փոսորակներ.

-ավազի շերտ, ■ Օջախի տեղը։

այն ժամանակը, երբ քարայրը ծառայել է որպես կացարան։ Այս երևույթը, սակայն, խոսում է բնակիչների ոչ թե փախուստի, կացարանի հանկարծակի լքման, այլ ողջ ունեցվածքով հանգիստ հեռանալու մասին, որը տարբեր շարժառիթներ կարող է ունեցած լինել։ Ակնհայտ է մի հանգամանք. մարդիկ քարանձավից հեռացել են կրկին վերադառնալու համար, ծածկելով հորերը սալաքարերով, որպեսզի մաքուր մնան։ Սակայն բնակիչները ինչ-ինչ պատճառներով այլևս ետ չեն վերադարձել և լքված կացարանը ժամանակի ընթացքում լցվել է ջրերի բերած ավազի հարթ շերտով։ Ահա այսպիսին է եղել քարանձավի պատկերը, երբ այն դամբարանի է վերածվել։ Իրոք, քարանձավի հյուսիսային մասի երեք հատվածներում (Ա, Բ, Գ), անմիջապես ավազի շերտի վրա, առկա էին դիակիզման հետքեր մոխրախառն կպչուն հողով։ Այս մասում հայտնաբերվեց նյութերի մի մասը. մինչդեռ մյուսները խճի, քարերի և հողի լիցքի մեջ էին գտնվում։ Նույն երևույթն ենք տեսնում և Ազատավանի վաղ հայկական ժամանակաշրջանով թվագրվող դամբարանում, ուր նույնպես դիակիզում է կատարվել[3]։ Հատկապես հելլենիստական ժամանակաշրջանում լայն տարածում ստացած և հետագա դարերում հանդիպող թաղման այս ձևը խոր արմատներ ունի[4]։

Նախքան քարանձավից հայտնաբերված նյութերի քննությանն անցնելը նշենք, որ մշակութային շերտի ուղղահայաց կտրվածքում դիտվեց դեպի մուտքը թեք բարձրացող, հողից ու քարերից բաղկացած շերտ, որի վրա, մուտքի մոտ 20 սմ հաստությամբ, իսկ դեպի քարանձավի խորքը հետզհետե հաստացող (55—60 սմ) մանրախճի շերտ էր ձգվում։ Վերջինիս վրա բարձրանում էր կավահողից ու քարերից բաղկացած հզոր լիցքը։ Տպավորությունն այն-

---

3 С. А. Есаян, Погребения VI—V вв. до н. э. в горах Шамшадина, СА, 1965, № 3, стр. 229.

4 Ժ. Դ. Խաչատրյան, Դիակիզումը Հայաստանում (մ. թ. ա. II—մ. թ. III դդ.), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1975, № 2։

պիսին է, որ հուդարկավորության մասնակիցները դիակներն այրելուց հետո կանգնել են մուտքի մոտ (այստեղ, հյուսիս-արևմտյան պատից, մուտքի հարավային մասին էր միանում 22 սմ բարձրությամբ, հատակագծում աղեղնաձև տեսք ունեցող պատը, որը դրված լինելով ավազի շերտի վրա՝ հյուսիս-արևմտյան հատվածում ծածկել էր փոսորակներից մեկի մի հատվածը) և այդտեղից նետել հողը, քարերն ու մնացած նյութերը։ Այնուհետև դեպի մուտքը բարձրացող այդ թմբիկի վրա լցվել է մանրախիճը, որը սահելով բարանձավի խորքը, լցրել է ապատ տարածությունները և ապա հավասար հաստությամբ բարձրացել դեպի մուտքը։ Այս ամբողջ գանգվածը լցնելով կավահողով ու քարերով, մարդիկ 170 սմ լայնությամբ և 2 մ բարձրությամբ մուտքը իջանել են երեք խոշոր քարերով։ Հայտնաբերված նյութերն են՝ դենքեր, պերճանքի առարկաներ և խեցեղենի տարաձև նմուշներ։

ԶԻՆՔԵՐ.— Պատրաստված են երկաթից և փոքրաքանակ են, զգալի չափով վնասված կամ թերի պահպանված։ Համեմատաբար ամբողջական է փոքրիկ բոլորատեգի ծայրը, իսկ դաշույնի և երկու դանակների ծայրերը կտրված են։ Բացառված չէ, որ այդ իրերը դամբարանն են դրվել ոչ ամբողջական վիճակում, երևույթ, որի արմատները նախորդ դարաշրջաններից են գալիս։

Թվարկված նյութերից դաշույնը երկսայր է. վերին մասում մի կողմից նեղանում է և ձևավորում լեղվակաձև պոչ, որի երկու կողմերից դամերի միջոցով ամրացվել է փայտե կամ ոսկրե կոթը (նկ. $2_1$)։ Գրեթե նույն ձևն ունեն և դանակները, այն տարբերությամբ, որ սրանց շեղբը մեջքի մասում հաստանում է, իսկ լեզվակը ստացել են երկու կողմերը (ավելի ցայտուն՝ աշխատող մասը) նեղացնելով (նկ. $2_2$-$_3$)։ Ինչ վերաբերում է տեգին, ապա նրա խոզովակաձև կոթառն ունի եռանկյունաձև բացվածք և դամի ամրացման համար նախատեսված անցք։ Կոթառի շարունակությունը հանդիսացող և աստիճանաբար նեղացող մարտական ծայրը կտրվածքում ոսպնյակաձև տեսք ունի (նկ. $2_4$)։

ՊԵՐՃԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ.—Ներկայացված են բրոնզից պատրաստված վզնոցով, ապարանջաններով, օղեր-մատանիներով, փոքրիկ զարդակոճակներով, ուլունքներով։ Պայմանականորեն այս խմբին ենք դասում կտրվածքում շրջանաձև տեսք ունեցող, կեռացող ծայրով, բրոնզե լարից պատրաստված իրը (նկ. $2_{20}$)։ Նշված նյութերից վզնոցը նույնպես կտրվածքում շրջանաձև տեսք ունի, ծայրերում տափակեցված է և ավարտվում է դեպի դուրս կլորացող օղակներով (նկ. $2_5$)։

Տարբեր ձևեր ունեցող ապարանջանները դասակարգվում են երկու խոշոր խմբում։ Առաջին խումբն են կազմում շրջանաձև ապարանջանները, որոնք իրենց հերթին բաժանվում են տարբերակների։ Առաջին տարբերակին պատկանողները երեքն են և առանձնանում են մյուսներից ծանր, զանգվածեղ տեսքով։ Դրանցից մեկը կտրվածքում ունի կիսաշրջանաձև տեսք, եզրերը իրար վրա են բերված (նկ. $2_6$), մինչդեռ մյուս երկուսի մոտ դրանք միայն մոտենում են միմյանց (նկ. $2_7$-$_8$)։ Պայմանականորեն երկրորդ տարբերակում ենք դասում ոչ զանգվածեղ, համեմատաբար բարակ բրոնզե լարից պատրաստվածները, որոնք ունենալով մոտեցող և հեռացող ծայրեր, միմյանցից տարբերվում են կտրվածքի ձևերով։ Իրոք, դրանց մի մասը, ինչպես առաջին տարբերակին պատկանողները, կտրվածքում կիսաշրջանաձև են (նկ. $2_{10}$, $_{11}$, $_{15}$, $_{20}$), մյուսները՝ ուղղանկյունաձև (նկ. $2_9$, $_{12}$, $_{19}$), երրորդները՝ ոսպնյակաձև (նկ. $2_{16}$-$_{17}$), իսկ մեկը՝ շրջանաձև (նկ. $2_{21}$)։ Կտրվածքում շրջանաձև տեսք ունի և մեկ այլ ապարանջան, որի մակերեսը ատամնավոր է (նկ. $2_{18}$)։

Երկրորդ խումբն են կազմում ներճկված մեջք ունեցող ապարանջանները, որոնք նույնպես բաժանվում են մի քանի տարբերակների։ Առաջին տարբերակին ենք դասում մեկ ապարանջան, որը կտրվածքում ունի ավելի շուտ եռանկյունաձև տեսք, զանգվածեղ է և կրկնում է առաջին խմբի նույն տարբերակում դասվածներին (նկ. $2_{24}$)։ Երկրորդ տարբերակինը երկուսն են։ Սրանք գնդիկավոր ծայրերով, բարակ լարից պատրաստված զարդեր են, որոնցից մեկը կտրվածքում շրջանաձև է (նկ. $2_{22}$), իսկ մյուսը՝ ոսպնյակաձև (նկ. $2_{23}$)։ Նույն բարակ բրոնզե լարերից են պատրաստված երրորդ տարբերակին պատկանող ապարանջանները, որոնք կտրվածքում ունենալով նույն ձևերը, ավարտվում են սրվող եզրերով (նկ. $2_{25}$-$_{27}$)։ Ապարանջաններից վերջինը, որը դասում ենք չորրորդ տարբերակին, տափակ է և լայն (նկ. $2_{28}$)։ Սրա մակերեսը գոտևորում են երեք փորագիր գծեր, իսկ եզրերը զարդարված են փորագիր անկյունաձև գծերով։

ՕՂԵՐ-ՄԱՏԱՆԻՆԵՐ.— Բարակ բրոնզե լարերից կամ տափակ թերթիկից պատրաստված զարդերի այդ տեսակը կտրվածքում ունի քառանկյունաձև, շրջանաձև, ուղղանկյան կամ ոսպնյակի տեսք։ Սրանց ծայրերը ինչպես միա-

ցած, իրար վրա բերված, այնպես էլ մոտեցող են (նկ. 2$_{32-37}$)։

ՈՒԼՈՒՆՔՆԵՐ.— փոքրաքանակ են և պատրաստված են սարդիոնից, շաղախից, ապակուց։ Հետաքրքիր է ակնուլունքը, որը կապույտ ապակուց է, զարդարված չորս սպիտակ շրջանաձև պատկերներով (նկ. 2$_{40}$)։ Կապույտ և երկնագույն ապակուց են պատրաստված գնդիկաձև ու գլանաձև ուլունքները (նկ. 2$_{42}$)։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում ապակու շաղախից պատրաստվածները։ Դրանցից մեկը կապտա-կանաչավուն գույն ունի և ձևով սակր է հիշեցնում, որի «բերանի» եզրերը ատամնավոր են, իսկ կենտրոնում շրջանաձև դրոշմազարդ է արված (նկ. 2$_{41}$)։ Ուլունքներից մյուսը տակառաձև է, երկնագույն ֆոնի վրա արված են դեղին ապակեթելից



Նկ. 2։

ստացված զարդեր (նկ. 2$_{43-65}$)։ Ինչ վերաբերում է սարդիոնից պատրաստված ուլունքներին, ապա դրանք գնդաձև են կամ տափակեցված։ Ավարտելով պերճանքի առարկաների նկարագրությունը, նշենք և բրոնզյա կիսագնդաձև զարդակոճակները, որոնցից մեկը կենտրոնում

փոքրիկ ելուստ ունի (նկ. $2_{30}$), իսկ մյուսը անցքով է (նկ. $2_{31}$)։

ԽԵՑԵՂԵՆ.—Տարբեր ձևերի ու կիրառության, որոնք հիմնականում բավական կոպիտ, հաստախեցի, ծանր տեսք ունեցող անոթներ են, որոնք տնայնագործական արտադրանքի տպավորություն են թողնում։ Բացառություն են կազմում փոքրիկ անոթներից մի քանիսը, որոնք ավելի նուրբ աշխատանքի արդյունք են։ Հայտնաբերված խեցանոթներից չորսը օյնոխոյատիպ են. երեքը կավագույն լոսած, անփայլ մակերեսներով, մեկը՝ սև, թույլ փայլեցրած։ Անոթներից մեկը մյուսներից առանձնանում է իրանի ձգված, սլացիկ տեսքով և փոդաձև լայնացող նեղ վզով, որի եռապսակ շրթից ուսամասին է միանում ծնկաձև տեսք ունեցող կանթը։ Վերջինս կտրվածքում շրջանաձև է (նկ. $2_{44}$)։ Հաջորդ անոթը, որի կանթը կոտրված է, ունի կարճ, լայն վիզ և հարթ, լայն հատակով գնդաձև իրան (նկ. $2_{45}$)։ Նույնպիսի լայն հարթ հատակ ու կարճ լայնաբերան վիզ ունի և անոթներից երրորդը (նկ. $2_{45}$)։ Զևով նախորդին է կրկնում տափակեցրած կանթով, սև գույնի, թույլ փայլեցված մակերեսով վերջին անոթը (նկ. $2_{46}$)։

Հաջորդ խումբն են կազմում տարբեր ձևի, յոթ մեծ միականթ անոթները։ Դրանցից մեկի իրանը ուսամասում շեշտված անցումով միանում է կտրուկ դուրս թեքվող շուրթով ավարտվող, դեպի վեր աստիճանաբար նեղացող բարձր վզին, որից ուսն է իջնում աղեղնաձև կանթը։ Անոթն ունի գարշնագույն, մրոտված, անփայլ մակերես (նկ. $2_{47}$)։ Մյուս երկու անոթներն ունեն կլորացող շուրթով ավարտվող, թեթևակի դուրս թեքված վզեր և աղեղնաձև կանթեր։ Լայն հատակներով ավարտվող ուռուցիկ իրանների մակերեսները թույլ փայլեցրած են (նկ. $2_{48-49}$)։ Անոթներից չորրորդը (ինչպես և առաջինը) ուսամասում շեշտված անցում ունի դեպի լայն վիզը, որը ցածր լինելով, ավարտվում է նույնպես դեպի դուրս կտրուկ թեքվող շուրթով։ Անոթի ծնկաձև կանթը տափակ է, իսկ սև գույնի իրանն ունի անփայլ մակերես (նկ. $2_{50}$)։ Մրածածկ է անոթներից հաջորդի իրանը, որի անփայլ մակերեսը աղյուսագույն է։ Աղեղնաձև կանթ ունեցող այս անոթը նախորդներից տարբերվում է ուղիղ բարձրացող վզով, որն ավարտվում է բարակող շուրթով (նկ. $2_{51}$)։ Վեցերորդ անոթը գլանաձև է, սև անփայլ, մրածածկ մակերեսով, ունի ցածր, ուղիղ և բարակ շուրթով ավարտվող վիզ։ Աղեղնաձև կանթը կտրվածքում շրջանաձև է (նկ. $2_{52}$)։ Այս խմբի անոթներից վերջինի իրանը կլորացող է, հատակը լայն և հարթ, ունի ոչ բարձր, դուրս թեքվող շուրթով վերջացող, գրեթե գլանաձև վիզ։ Կտրվածքում շրջանաձև, աղեղի տեսք ունեցող կանթը հորիզոնական դիրքով տեղադրված է անոթի ուսամասում։ Ամանն ունի սև, թույլ փայլեցրած մակերես (նկ. $2_{53}$)։

Մեկ օրինակով է ներկայացված թեյամանաձև խոշոր անոթը, որի ծորակը, դուրս թեքված վիզը և աղեղնաձև կանթը թերի են։ Անոթի գնդաձև իրանն ունի դարշնա-սեագույն, մրոտված, անփայլ մակերես (նկ. $2_{57}$)։ Հետևյալ անոթն ունի ոչ բարձր, ուղիղ վիզ, ուռուցիկ իրան, լայն հարթ հատակ (նկ. $2_{58}$)։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում աղյուսագույն մակերեսով, երկկանթ տափաշիշը, որը թերի է։ Պահպանված մասերից երևում է, որ այն ունեցել է մեկ կողմից ուռուցիկ, իսկ մյուսից թեթևակի սեղմված սկավառակաձև իրան (նկ. $2_{59}$)։

Առանձին խումբ են կազմում փոքրածավալ անոթները (5 հատ)։ Դրանցից երկուսը գրեթե միանման են, դուրս թեքված ուղիղ վզերով, այն տարբերությամբ, որ մեկի կավագույն անփայլ մակերեսով իրանը ձգված տեսք ունի (նկ. $2_{60}$), մինչդեռ մյուսը կարճ է և ուռուցիկ, իսկ մակերեսը դարշնա-սեագույն, թույլ փայլեցրած (նկ. $2_{60}$)։ Անոթներից հաջորդը իրանի և վզի ձևով կրկնելով առաջինին, տարբերվում է նրանից իրանի կենտրոնում արված հորիզոնական, եռանկյունաձև խուլ կանթով. մակերեսը սև է և անփայլ (նկ. $2_{60}$)։ Նույնպիսի դուրս թեքվող վիզ ունի և չորրորդ անոթը, որի իրանը, սակայն, ստորին մասում ավելի կարճ է և ուռուցիկ, իսկ հատակը՝ լայն. ունի գարշնագույն, անփայլ, մրոտված մակերես (նկ. $2_{53}$)։ Այս խմբի անոթներից վերջինի կանթը և վիզը կոտրված են. կլորացող իրանի ուսամասը զարդարված է փորագիր զույգ ակոսագծերի միջև տեղադրված կետաշարքով, իսկ այդ գծերից ներքև պատկերված են ճառագայթաձև, գագաթներով ցած ուղղված եռանկյունիներ (նկ. $2_{61}$)։ Անոթն ունի շագանակագույն անփայլ մակերես։

Երեք օրինակով են ներկայացված թասերը։ Դրանցից երկուսը միանման են, ունեն կիսագնդաձև տեսք և ավարտվում են բարակող շուրթով։ Անոթներից մեկի մակերեսը գորշ կլսրմրավուն է (նկ. $2_{62}$), իսկ մյուսինը՝ դարշնագույն և մրոտված։ Թասերից երրորդն ունի բավական հաստ կողեր, որոնք բութ անկյուն կազմելով հարթ և լայն հատակի հետ՝ ավարտվում են դեպի ներս թեք կտրված շուրթով։ Անոթի մակերեսը սև է և անփայլ (նկ. $2_{64}$)։

Խեցեղենի մեջ մեծ թիվ են կազմում հրագ-

ները, որոնք դստ ձևի բաժանվում են երեք տարբերակի։ Դրանցից մեկը ձևով կրկնում է կիսագնդաձև թասիկներին այն տարբերությամբ, որ շուրթը մեկ կողմից թեթևակի սեղմված լինելով՝ քթիկ-ծորակ է ձևավորում (նկ. $2_{65}$)։ Ճրագների մյուս խումբը կազմված է ութ օրինակից։ Սրանք հարթահատակ են և ունեն նավակաձև տեսք (նկ. $2_{65}$)։ Երրորդ խմբի ճրագների հատակները նույնպես հարթ են և լայն, բայց ի տարբերություն նախորդների սրանց իրանները որոշ չափով շրջանաձև են և առաջամասում կորացող միջնապատ ունեն։ Դրանցից մեկի ներքևում փոքրիկ անցք է արված (նկ. $2_{66-67}$)։

Դամբարանից գտնված վերջին իրը[5] խեցանոթի բեկորից պատրաստված անվակի մոդելի մաս է (նկ. $2_{38}$)։

Հայտնաբերված նյութերի թվագրությանն անցնելով նշենք, որ դրանց մի զգալի մասը, երկար գոյատևելով, իր զուգահեռներն է գտնում տարբեր ժամանակաշրջանների հուշարձաններում, որը և փաստարկում է այդ մշակույթի տեղական լինելը։ Իրոք, լխոսելով անվակի մոդելի, զարդակոճակների, շրջանաձև ապարանջանների[6], վզնոցի և այլ նյութերի մասին, որոնց կրկնօրինակները բազմաթիվ են դեռևս բրոնզեդարյան հուշարձաններում, նշենք մյուս նյութերի խոր արմատներ ունենալը։ Այսպես, ճրագների երրորդ խումբը, կրկնելով ուրարտական հուշարձաններում հայտնաբերվածներին (Թեյշեբաինի, Արգիշտիխինիլի և այլն)[7], որոշ փոփոխություններ կրելով հարատևում է հելլենիստական ժամանակաշրջանում (Արտաշատում հայտնաբերվածը, որ թվագրվում է մ. թ. ա. II—I դդ., տարբերվում է թերևս երկայնակի ձգվող միջնապատով)[8] և մի փոքր ձևափոխված հանդիպում նույնիսկ վաղ միջնադարում։ Մ. թ. ա. VII—VI դդ. հուշարձաններում ենք տեսնում ճրագների երկրորդ խմբի վաղ նախաձևերը։ Մենք նկատի ունենք Կարճաղբյուրի № 23 դամբարանից (1972 թ. գաշտային համարակալմամբ) գտնվածը, որը, սակայն, ուղիղ կողեր ունի[10]։ Ճրագների այս պարզունակ տեսակների կրկնօրինակները մեծ քանակությամբ հայտնի են Գառնիի, Արմավիրի և անտիկ ժամանակաշրջանին պատկանող այլ հուշարձաններից[11]։ Ավելորդ չէ նշել, որ երկրորդ խմբի ճրագները հարատևում են և միջնադարում։ Տարբեր ժամանակաշրջանների պատկանող հուշարձաններում են հանդիպում նաև կիսագնդաձև թասերը, որոնց վաղ նմուշները հայտնի են մ. թ. ա. II հազարամյակից։ Լայն տարածում ստանալով հետագայում[12], սրանք վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանում հաճախ հանդես են գալիս գունազարդված կամ ներկվում են կարմիր գույնով, որը սովորաբար տարվում է շուրթի վրա լայն ժապավենի ձևով[13]։

Դեռևս վաղ հայկական ժամանակաշրջանի հուշարձաններում են իրենց զուգահեռները գտնում և մյուս անոթները։ Այսպես, Բերդի մ. թ. ա. V—IV դդ. թվագրվող դամբարաններից մեկում հայտնաբերված անոթներից երկուսը չեն տարբերվում հորիզոնական կանթ (նկ. $2_{56}$) և բարակող շուրթով ավարտվող (նկ. $2_{51}$) անոթներից[14]։ Ավելին, այստեղ գտնվել են ներճկված մեջքով օձագլուխ ապարանջան, բրոնզյա վզնոց, որոնք նման են Գորիսում հայտնաբերվածներին։

---

5 Դամբարանից գտնվել են խայտաքիսի, ոչխարի, նապաստակի, կովի (առամ) և ջեյրանի առանձին ոսկորներ։ Բնորոշումը ՀՍՍՀ ԳԱ կենդանաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատակցուհի Ս. Կ. Մեժլումյանի։

6 Ս. Ա. Եսայան, Հայաստանի Պատմության թանգարանի բրոնզե ապարանջանները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 2, էջ 83—94։

7 Б. Б. Пиотровский, Кармир-Блур, т. II, Ереван, 1952, стр. 31, рис. 13. А. А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974, стр. 57, рис. 36 б.

8 Այս մասին մեզ տեղեկացրել է Ժ. Դ. Խաչատրյանը։

9 Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, աղ. XXXVIII, նկ. 3, էջ 23։

10 Պեղումները Հ. Հ. Մնացականյանի, նյութը հրատարակված չէ։

11 Г. А. Тирацян, Древнеармянская керамика из раскопок Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 213։

12 Ի. Ա. Կարապետյան, Կարճաղբյուրի պեղումները (1975—1978 թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, էջ 273, աղ. 1, նկ. 10։

13 Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, էջ 267, աղ. II, նկ. 1։

14 С. А. Есаян, Могильник раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 285։

Պեղված նյութերի թվագրությունը հշտելու հարցում առանձին նշանակություն չի կարող ունենալ և խոհանոցային անկանթ անոթը (նկ. 2...)։ Ճիշտ է, մեծ քանակությամբ նման անոթներ և այդպիսիների պատկանող բազմաթիվ բեկորներ են գտնվել Արմավիրի և ընդհանրապես այլ հելլենիստական հուշարձանների՝ մ. թ. ա. III—I դդ. թվագրվող նյութերի հետ, բայց ինչպես իրավացիորեն մատնանշում է Գ. Ա. Տիրացյանը, «դրանց ընդհանուր ձևը որևէ լական փոփոխություններ չի կրել երկաթի դարաշրջանից սկսած ընդհուպ մինչև միջնադար»[15]։ Խոսելով արմավիրյան զուգահեռների մասին, նշենք, որ այստեղից, մ. թ. ա. III—I դդ. թվագրվող նյութերի հետ, հայտնաբերվել են նաև տարբեր տեսակների ծորակավոր անոթներ։ Գտնվել են տափաշշի, հրազներ, կիսագնդաձև թասիկներ, որոնք ամենևին չեն տարբերվում Գորիսում հայտնաբերվածներից[16]։ Ինչ վերաբերում է տափաշշին, ապա դրա զուգահեռները նույնպես հայտնի են թե՛ վաղ հայկական և թե՛ հելլենիստական ժամանակաշրջանների հուշարձաններում։ Սակայն, ինչպես ցույց են տալիս հետազոտությունների արդյունքները, Հայաստանում հայտնաբերվածները մ. թ. ա. I դարի կեսերից են գնդաձև տեսք ստանում, փոխարինելով հելլենիստական ժամանակաշրջանին բնորոշ երկու կամ մեկ կողմից սեղմված իրան ունեցողներին[17]։ Գորիսի նմուշը, այսպիսով, ավելի բնորոշ է հելլենիստական ժամանակաշրջանին։ Նույնը կարելի է ասել օյնոխոյատիպ անոթների վերաբերյալ, որ Հայաստանում արիմինյան և հելլենիստական ժամանակաշրջանի լայն տարածում ունեցող նյութերից են։ Ուրարտական[18] և հունական ազդեցություններ կրող այդ անոթներն իրենց զուգահեռներն ունեն Դվինի, Արմավիրի և հելլենիստական ժամանակաշրջանին պատկանող այլ հուշարձանների նյութերում[19]։ Նույնաձև անոթ է հայտնաբերված Օշականի ավերված կարասային թաղումից։ Նրա հետ գտնվել են ներճկված ապարանջաններ, տափաշշի և այլ նյութեր, որոնք թվագրվում են մ. թ. ա. III—I դդ.[20]։ Նախնականորեն մ. թ. ա. IV—III դդ. են թվագրվում և Դմանիսի շրջանի Գոմարեթի գյուղի մոտ պեղված դամբարաններից հայտնաբերված նյութերը, որոնց մի զգալի մասը արտակարգ նման է զանգեզուրյան նյութերին[21]։ Այստեղ հայտնաբերվել են ներճկված ապարանջաններ, ծորակավոր անոթ, միականթ բարձրավիզ ամաններ, ինչպես և այլ միականթ կճուճաձև անոթներ։ Նկատենք, սակայն, որ վերջինները, առանց որակական փոփոխություններ կրելու, ունեցել են գոյատևման ավելի երկար ժամանակաշրջան։ Այդ են ապացուցում Գառնիում, Արտաշատում, Արմավիրում և այլ վայրերում հայտնաբերված՝ մ. թ. ա. II—I դդ. թվագրվող միականթ կճուճները, որոնք ամենևին չեն տարբերվում Գորիսում գտնվածից (նկ. 2...)[22]։ Միակ տարբերությունն այն է, որ Գառնիում գտնվածի կանթը կտրվածքում քառանկյուն է, մի ձև, որն առկա է քարանձավում հայտնաբերված մյուս ամանների վրա և թվագրմանը չի հակասում։

Հելլենիստական ժամանակաշրջանի հուշարձաններում, սակայ՝ մ. թ. առաջին դարերի թաղման համալիրներում են հայտնաբերվում ակնուլունքները, որոնք, ինչպես մատնանշում են հետազոտողները, ներմուծվել են Արևելյան Միջերկրականի ապակեգործական կենտրոններից և օգտագործվել որպես թալիսման-պահպանակներ։ Հիմնականում հելլենիստական ժամանակաշրջանի հուշարձաններում են հանդիպում նաև հիմնական զանգվածի վրա տարբեր գույների ապակեթելերով դարդ ունեցող ուլունքները[23]։ Ավելին, որոշ հետազոտողներ հակված

---

15 Г. А. Тирацян, Древнеармянская керамика..., էջ 216։ Նույնի՝ Արմավիրի պեղումները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 12, նկ. 3 բ։

16 Գ. Ա. Տիրացյան, Հնագիտական աշխատանքները Արմավիրում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1973, № 5, էջ 98—99, նկ. 3—6։

17 Ф. И. Тер-Мартиросов, Фляги как торговая тара, «Проблемы античной истории и культуры» (доклады XIV международной конференции), т. II, Ереван, 1979, стр. 409—414.

18 Ժ. Դ. Խաչատրյան, Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1966, № 1, էջ 88։

19 Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, էջ 61։ Գ. Քոչարյան, Դվինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 5, էջ 87, նկ. 4։

20 С. А. Есаян, А. А. Калантарян, Античный некрополь Ошакана, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1976, № 12, էջ 32—33, աղ. II, նկ. 4։

21 Ц. О. Давлианидзе, Краткий отчет разведочных раскопок 1975 г. в сел. Гомарети, «Археологические экспедиции Гос. музея Грузии», т. V, Тбилиси, 1977, стр. 99, табл. I—III.

22 Ж. Д. Хачатрян, Гарни V, Ереван, 1976, стр. 38, рис. 14.

23 Նույն տեղում, էջ 109—110։

են կարծելու, որ այդօրինակ ուլունքների առկայությունն իսկ պետք է մատնանշի դրանց թվագրությունը՝ մ. թ. ա. III—II դդ., երբ պատրաստման տվյալ եղանակը լայն տարածում է ստանում[24]։ Ինչպես հելլենիստական, այնպես էլ վաղ հայկական ժամանակաշրջանի լայն տարածված զարդերից են եղել ներմկված ապարանջանները, որոնց վաղագույն և պարզ նմուշները հայտնի են մ. թ. ա. IX—VIII դդ. հուշարձաններում և ներկայումս փոքրիկ խումբ են կազմում։ Իրոք, նախկինում արդեն հայտնի կույբիշևյան օրինակին[25] այժմ ավելանում են Շիրակավանից հայտնաբերվածները, որոնք գտնվել են մի դեպքում մ. թ. ա. IX—VIII դդ., մյուսում՝ մ. թ. ա. VII—VI դդ. նյութերի ուղեկցությամբ[26]։ Բերված փաստերը ցույց են տալիս, որ ապարանջանների հետազոտվող տեսակը տեղական ծագում ունի և զարգացման երկար ճանապարհ է անցել՝ հանդես գալով աքեմենյան և հելլենիստական ժամանակաշրջաններում բազմազան ձևերով։ Ապարանջանների այս տեսակը հարատևում է մինչև մ. թ. ա. I դարը[27], որից հետո դուրս է գալիս գործածությունից[28]։ Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունների արդյունքները, տարբեր ժամանակահատվածներում առավել տարածում են ունեցել այդօրինակ ապարանջանների առանձին տարբերակներ։ Դրանցից են և ծայրերին գնդիկ ունեցողները, որոնք առավել տարածված են եղել մ. թ. ա. III—I դդ[29]։

Այսպիսով, հայտնաբերված նյութերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք պատկանում են հելլենիստական ժամանակաշրջանին և կարող են նախնականորեն թվագրվել մ. թ. ա. III—II դդ.։

Խոսելով Գորիսից հայտնաբերված հելլենիստական ժամանակաշրջանի նյութերի մասին, նշենք և Գորիսից ոչ հեռու գտնվող Բրուն գյուղի մի դամբարանից հայտնաբերվածները (1980 թ.)։ Արևելքից-արևմուտք ուղղված քարարկղային այս դամբարանը (երկար. 3,10, լայն. 1,40, խոր. 1,40 մ) գտնվում էր գյուղի այգիների տարածքում և արտաքինից ցածր դամբարանաթումբ ուներ։ Ինչպես պարզվեց պեղումների ընթացքում, այստեղ կրկնակի թաղում էր կատարվել։ Իրոք, դամբարանախցի արևմտյան մասում անկանոն ընկած էին երեք կմախք, որոնցից մեկի գանգի գագաթնամասը սուր գործիքով ծակված էր։ Նյութերը սփռված էին ողջ դամբարանախցով մեկ և պատկանում էին երկաթի լայն յուրացման ժամանակաշրջանին։ Այս նյութերի հետ խառը վիճակում առկա էին նրանցից ակնհայտորեն տարբերվող մի քանի խեցանոթների բեկորներ, որոնց բացդեղնավուն մակերեսը ներկված էր կարմիր գույնով։ Այդ բեկորներից մի քանիսը ցայտուն դուրս թեքված և հարթ կտրտված շուրթով մատուցարանի կտորներ էին։ Այն ունեցել է վերին մասում փոքր-ինչ ներս հակված իրան (նկ. $3_2$)։ Բեկորներից մյուսը սափորաձև մեծանոթի վզի կտոր է, որն ավարտվում է դուրս թեքված և հարթ կտրած շուրթով։ Անոթի վզի ստորին մասում զարդարված է եղել փոսիկաձև նախշեր ունեցող ելուստագոտիով, իսկ ներսից ներկված 3 սմ լայնությամբ կարմիր գույնի ժապավենով (նկ. $3_3$)։ Մյուս երկու տձև բեկորներից մեկի վրա պահպանված է զույգ ակոսագծերի միջև տարված ալիքաձև փորագիր զարդը (նկ. $3_4$), իսկ հաջորդը, որի մակերեսը, ինչպես և նախորդներինը կարմիր է ներկված, ունի հավելադիր ալիքաձև զարդաշղթա, որից ցած թույլ ակոսագծեր են տարված (նկ. $3_5$)։ Այս բեկորներից բացի գտնվեցին ևս երեքը, որոնք տձև են, ունեն մակերեսի նույն կարմիր գույնը, վերն ուսումնասիրվածների պես կոտրրվածքում աղյուսագույն են և ունեն լավ հունցած կավախմոր ավազի բաղադրությամբ։ Բեկորներին համաժամանակյա վերջին իրը կապույտ ապակուց պատրաստված բազմանիստ կնիքն է (երկար. 18 մմ., լայն. 11 մմ., հարթ կողի բարձր. 5 մմ), որի ներքին հարթ մակերեսին պատկերված վարգող ձիու գավակին և գլխին, թևերը ցած իջեցրած վիճակում կանգնած են կտուցներով իրար դարձած երկու թռչուններ։ Ձիու առջևի ձգված ոտքերի մոտ մահիկաձև կամ ձկնաձև հանվածք կա, որը հավանաբար վնասվելու հետևանք է (նկ. $3_1$)։

---

24 Ю. М. Гагошидзе, К датировке могильника Нерон Дереси (с. Санта Цалкского р-на Грузинской ССР), «Известия» АН Грузинской ССР, 1975, № 2, стр. 94—95.

25 С. А. Есаян, Г. А. Оганесян, Каталог археологических предметов Дилижанского краеведческого музея, Ереван, 1969, стр. 119, табл. XXXIV, рис. 9։

26 Պեղումները Ռ. Մ. Թորոսյանի, Լ. Ա. Պետրոսյանի և Օ. Ս. Խնկիկյանի, նյութը հրատարակության է պատրաստվում։

27 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, стр. 33; Ж. Д. Хачатрян, Гарни, V, стр. 90.

28 Ի. Ա. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 277։

29 Ю. М. Гагошидзе, նշվ. աշխ., էջ 96։

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ քարից և ապակուց պատրաստված այս իրերը (ենթադրաբար՝ բազմանիստ կնիքներ) տարածման լայն շրջանակ են ունեցել (Անդրկովկաս, Պարսկաստան, Հունաստան, Փոքր Ասիա և այլն)։ Ընդ որում «Հայաստանն իր աշխարհագրական գիրքով մտնում էր հունա-պարսկական և փոքրասիական քարե կնիքներն ստեղծող երկրների ոլորտի մեջ... և նույնպես հանդիսացել է արտադրության կենտրոններից մեկը ինչպես քարե բազմանիստների, այնպես էլ ապակյա կրկնօրինակների համար»[30]։

Ներկայումս տարբեր հուշարձաններում հայտնաբերվել են քարից և ապակուց պատրաստված կնիքներ, որոնք տարբերվում են իրենց թեմատիկաներով։ Դրանցից զանգեզուրյան նմուշին մոտ է Մահմուզջուղ գյուղում հայտնաբերված, երկնագույն ապակուց պատրաստված կնիքը, որի վրա պատկերված են եղնիկի վրա կանգնած թռչուններ, իսկ Գեղադիրից գտնվածի պահպանված մասի վրա երևում են ձիու առջևի կևսն ու գլխին կանգնած թռչունը[31]։ Ձիու վրա կանգնած թռչուններ են պատկերված Օշականից հայտնաբերված նմուշի վրա, որը գտնվել է մ. թ. ա. II—I դդ. թվագրվող նյութերի միջավայրում[32]։ Այս ժամանակաշրջանով են թվագրվում և Վրաստանի բաղմաթիվ հուշարձաններից հայտնաբերված, ապակուց պատրաստվածները[33]։ Բերված զուգահեռները թույլ են տալիս պեղված նյութերը թվագրել մ. թ. ա. II—I դդ.։ Առաջարկված թվագրությանը չի հակասում և ամանները կարմիր ներկելու սովորությունը, որը կապվելով դեռևս վաղ հայկական ժամանակաշրջանի խեցեգործական ճաշակների հետ, հարատևում է և հետագայում։ Թվում է, որ այդ թվագրության օգտին է վկայում և բազմանիստ կնիքի առկայությունը նման աղքատիկ նյութերի միջավայրում, որն ամենայն հավանականությամբ խոսում է այն մասին, որ ապակե կնիք-




Նկ. 3։

30 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1, էջ 275։

31 Նույն տեղում, էջ 275—276, նկ. 4—5։

32 С. А. Есаян, А. А Калантарян, նշվ. աշխ., էջ 32—33։

33 Ю. М. Гагошидзе, նշվ. աշխ., էջ 94—95։

ները հելլենիզմի ժամանակաշրջանում գերակշռող են եղել և գուրս են մղել մ. թ. ա. V—IV դդ. բնորոշ քարե թանկարժեք կնիքները[34]։

Այսպիսով կարելի է ասել, որ Գորիսից և Բրունի գյուղից հայտնաբերված շարքային նյութերը տեղական են։ Ցնցած փոքրաքանակությանը, այդ նյութերի արժեքը կայանում է նրանց անպատկերազարդ տեսքի մեջ, որը խիստ կարևոր է ժողովրդի կենցաղը, նրա թողած մշակույթը վեր հանելու տեսակետից։ Ընդգրկված լինելով հելլենիզմի դարաշրջանի մշակույթի ոլորտի մեջ (այդ են փաստարկում Արտաշեսի արամեական արձանագրությունը, պատահականորեն հայտնաբերված ապակե սրվակները, Սիսիանի դամբարանի հարուստ նյութերը և այլն), Գորիսի և Բրունի նյութերը լրացնում են Զանգեզուրի շարքային բնակչության կենցաղի վերաբերյալ եղած բացը։ Ահա այս տեսակետից նորահայտ նյութերի գիտական արժեքը մեծ է։ Դրանք միաժամանակ հանդիսանում են մեր նախնիների թողած ուրույն մշակույթի անքակտելի մասը։ Պատահական չէ, որ այդ նյութերը մի կողմից իրենց բազմաթիվ զուգահեռները գտնելով տարբեր վայրերի համաժամանակյա նյութերում, մյուս կողմից իրենց նախաձևերն ունեն բրոնզի ու երկաթի դարաշրջաններին պատկանող հուշարձաններում։ Բնական է, որ այս երևույթը կարող է պերճախոս կերպով վկայել միայն ժողովրդի՝ իր նախնիներից ստացած ավանդույթների պահպանման ու զարգացման մասին։ Մշակույթի հիմնական դեմքը կազմող այս նյութերի կողքին առկա են և այնպիսիները (տվյալ դեպքում քարանձավից հայտնաբերված որոշ ուլունքներ), որոնք կարող են դիտվել իբրև ներմուծված կամ արտաքին ազդակների տակ տեղում պատրաստված արտադրանք։ Սա միանգամայն բնական երևույթ է հելլենիստական դարաշրջանի հզոր մշակույթի ոլորտի մեջ ընդգրկված, բայց հիմնականում իր ներքին կյանքով ապրող Հայաստանի համար։

Պատմ. գիտ. թեկնածու Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ

## ԼՈՌԻՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐ

1979 թ. Լորուտ գյուղի հյուսիս-արևմտյան ծայրամասում, Վերին Թաղ կոչվող վայրում, Վ. Ավետյանի կողմից պեղվեցին քարարկղային տիպի մի քանի դամբարաններ, որոնցից մեկում մ. թ. ա. VIII—VII դդ. մեսաղե և կավե իրերի հետ գտնվեց բրոնզե գոտի, որի ձախ մասը չի պահպանվել (նկ. 1)։ Գոտու պահպանված մասն ունի 76 սմ երկարություն և 14 սմ լայնություն։ Նրա եզրերը զարդարված են երկշարք ոլորապտույտ նախշերով, իսկ լայնակի աջ կողմը, բացի ոլորապտույտից, նաև՝ երկշարք շեղանկյուն նախշերով։ Մակերեսին փորագրված է բարդ կոմպոզիցիոն պատկեր։ Աջից ձախ խիստ ոճավորված խոշոր եղջյուրներով երեք կենդանիներ են (ձախ կողմի ջարդված մասում երևում են չորրորդի հետքերը), որոնք պատկերված են սրընթաց, բառաստրի վազքի պահին։ Եղջյուրները տափակ են, ունեն կիսալուսնաձև տեսք և նմանվում են Ախթալայում, Խոջալիում և Մարադինդերեսիում գտնված գոտու վրա պատկերված կենդանիներին[1]։ Մարմիններին զցված են օղակաձև զարդով նախշված ծածկոցներ։ Նման ծածկոց է զարդարում նաև Այրումում գտնված ցուլի բրոնզե արձանիկի մարմինը[2]։ Նշված կենդանիների առջևից ընթանում են թռչուններ, որոնք կտցում են հողը, իսկ ետևից ընթացող թռչունները կտցում են նրանց պոչերը՝ կարծես աշխատելով արգելել վազքը։

Առաջին խմբի կենդանիների ետևից վազում են նույնատիպ ծածկոցներով երկրորդ խմբի կենդանիները, որոնք առաջիններից տարբերվում են կարճ, կեռ եղջյուրներով և ոտքերի դիրքով։ Կենդանիների դլուխները առաջ են ձգված, իսկ լայն շրթունքները կիսաբաց են և այն տպավորությունն են ստեղծում, որ նրանք պատրաստվում են կծել կամ շրթունքներով բռնել առջևից վազողներին։ Այս խմբի առաջին և երրորդ կենդանիների վրայով, նրանց ընթացքին հակառակ լողում են երկու ձուկ,

---

34 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի հելլենիստական շրջանի գլիպտիկայի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ», 1974, № 7, էջ 98։

1 J. de Morgan, Mission scientifique au Caucase, I, Paris, 1889, fig. 190; Дж. А. Халилов, Бронзовые пояса, обнаруженные в Азербайджане, «Материальная культура Азербайджана», IV, Баку, 1962, табл. VI, рис. I, табл. XI, рис. I; Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, т. I, Тбилиси, 1941, стр. 50—51.

2 С. А. Есаян, Древняя культура племен Северо-восточной Армении, Ереван, 1976, табл. 154.